

Եվրոպական Միության փորձագետները Գեղարքունիքի մարզպետարանում անցկացրեցին հերթական դասընթաց

11.09.2015

Մեպտեմբերի 10-ին Գեղարքունիքի մարզպետի տեղակալ Անդրանիկ Հակոբյանն ընդունեց Եվրոպական Միության փորձագետներին: Այցի նպատակն էր հանդիպել մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի աշխատակիցների, ինչպես նաև Տարածքային Չարգացման ծրագրի մշակման աշխատանքներ իրականացնող ոլորտային աշխատանքային խմբի ներկայացուցիչների հետ, ովքեր այս տարվա ընթացքում մասնակցել են ԵՄ նախաձեռնությամբ կազմակերպված ,, Մասնագիտական Կարողություններ`Տարածքային Չարգացման Գործընթացներում,, թեմայի շրջանակներում կազմակերպված վերապատրաստման դասընթացներին: Մարզպետի տեղակալը ողջունեց Տարածքային Չարգացման Ռազմավարությունների կարողությունների (ՏՁՌԿ) բարձրացման նպատակով մարզ այցելած ԵՄ դասընթացավարներին , մաղթելով նրանց հաջողություններ ընթացիկ աշխատանքներում: Անդրանիկ Հակոբյանը պատարտականություն հայտնեց անհրաժեշտության դեպքում աջակցելու իրականացվող աշխատանքներին: Այնուհետև ԵՄ փորձագետները դասընթաց անցկացրեցին ոլորտային աշխատանքային խմբի ներկայացուցիչների հետ , որի նպատակն էր ամրապնդել ֆորմալ դասընթացների միջոցով ստացված գիտելիքները, հասկանալ Տարածքային Չարգացման Ռազմավարության (ՏՁՌ) կառուցվածքի բովանդակությունը և մշակման գործընթացը, ինչպես նաև գնահատել պատրաստականությունը մարզում Տարածքային Չարգացման Ռազմավարության(ՏՁՌ) մշակման գործընթաց նախաձեռնելու համար: